ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ /ՀՎԷԷՀ/

Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագիր
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ
ԾՐԱԳԻՐ P155662
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Տնտեսական գնահատման մասնագետ, SPP-CS-16/2016

Սույն հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավերը հետևում է ծրագրի գնումների ընդհանուր ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business-ում 2015թ. հունիսի 23-ին և www.gnumner.am (www.procurement.am) կայքում:

Հայաստանի Հանրապետությունը ստացել է դրամաշնորհ Կլիմայի ներդրումների Հիմնադրամից Վերականգնվող Էներգետիկայի Ընդլայնումը ցածր եկամուտ ունեցող Երկրներում Ծրագրի շրջանակներում (ՎԷԸԾ) և նպատակ ունի միջոցների մի մասն ուղղել խորհրդատվական ծառայությունների մատուցմանը՝ Հայաստանի Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի /այսուհետ՝ Ծրագիր/ շրջանակներում գնումների իրականացմանը:

Նպատակը
Սույն առաջադրանքի նպատակն է իրականացնել Ծրագրի տնտեսական գնահատումը:

I. Աշխատանքների շրջանակը

Առաջադրանք 1: Իրականացնել առաջարկվող ծրագրի տնտեսական գնահատումը. Տնտեսական գնահատումը պետք է իրականացվի հաշվի առնելով Համաշխարհային Բանկի ներդրումային գործառնությունների տնտեսական գնահատման ուղեցույցի (մայիս, 1996 թ.), Ներդրումային ծրագրի ֆինանսավորման տնտեսական վերլուծության ուղեցույցի (OPSPQ, 9 հոկտեմբերի, 2004 թ.) հիմնական պահանջները և Համաշխարհային Բանկի Ծրագրերի տնտեսական վերլուծության ծախսերի զեղչումը և օգուտները (մայիս 9, 2016 թ.):

Առաջադրանք 2: Իրականացնել ծրագրի փոխանջատման արժեքի վերլուծությունը: Որպես զգայունության վերլուծության մաս, խորհրդատուն պետք է բացահայտի հիմնական փոփոխականները և ենթադրությունները, որոնք էական ազդեցություն ունեն ծրագրի տնտեսական կենսունակության վրա:

Առաջադրանք 3: Ծրագրի գնահատումը ՎԷԸԾ ներդրումային չափանիշների տեսանկյունից: Այդ չափանիշները ենթադրում են ծրագրի ազդեցությունը էլեկտրաէներգիայի արտադրության բարձրացման, արտանետումների նվազեցման, էներգիայի արդյունավետ օգտագործման, առաջարկվող ծրագրի տնտեսական հիմնավորման համապատասխանության մատչելիության և մրցունակության սկզբունքների հետ, և այլ գործոններ, որոնք կարող են տրամադրվել ՀՎԷԷՀ-ի կողմից:

Առաջադրանք 4: Պատրաստել գրավոր մանրամասն հաշվետվություն ծրագրի տնտեսական գնահատման արդյունքների վերաբերյալ, այդ թվում ենթադրությունների հստակ ցանկ (աղյուսակի տեսքով) և տնտեսական ծախսերի և օգուտների հոսքը՝ հավելվածի տեսքով: Խորհրդատուն

պետք է նաև Պատվիրատուին ներկայացնի վերջնական տարբերակները Excel ձևաչափով կամ այլ մոդելներ, որոնք կիրառվել են ծրագրի տնտեսական գնահատման ընթացքում:

Թեկնածուն պետք է ունենա հետևյալ որակավորումները.

- Առնվազն տնտեսագիտության, ֆինանսների կամ ինժիներական բնագավառի մագիստրոսի աստիճան:
- Նվազագույնը 7 տարվա միջազգային աշխատանքային փորձ էներգետիկ նոր հզորությունների կառուցման տնտեսական գնահատման ոլորտում, ներառյալ արևային կայանների կառուցման տնտեսական հիմնավորման:
- Փորձ տարածաշրջանում նոր էներգետիկ հզորություններկ կառուցման տնտեսական գնահատման ոլորտում, ներառյալ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների:
- Անգլերեն լեզվի գերազանց իմացություն:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամն այժմ հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական սեղմագրեր (CVs), որոնք ներառում են տեղեկատվություն Ծառայությունների իրականացման համար պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ: Ընտրության չափանիշները հետևյալն են.

- Ընդհանուր որակավորումը
- Համապատասխանությունը ծրագրին
- Լեզուների իմացությունը

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Բանկի կողմից 2011թ. հունվարին /վերանայված հուլիս 2014թ. /հրատարակված Համաշխարհային Բանկի Ուղեցույցի 1.9 կետին՝ “Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունումը ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում” /Խորհրդատուի ուղեցույց/, որը սահմանում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ: Խորհրդատուի ընտրությունը կատարվում է ըստ Համաշխարհային Բանկի՝ “Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունումը ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում” Ուղեցույցում /հունվար 2011, վերանայված հուլիս 2014/ բերված ընթացակարգերի համաձայն:

Լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ ստորև նշված հասցեով տեղական ժամանակով **9:00-18:00 (GMT+4:00):**

Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել ստորև նշված հասցեով մինչև **2016թ. սեպտեմբերի 12-ը:**

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Տնօրեն՝ Թամարա Բաբայան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11;
e-mail: g.zara@r2e2.am; info@r2e2.am
Վեբ կայք՝ www.r2e2.am